ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի 2026թ. մայիսի 14-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 25-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման բաց մրցութային ընտրություն
2. Ընթացիկ հարցեր

1. Ֆակուլտետի ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման բաց մրցութային ընտրություն

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ ինտերնետային կայքէջում հրապարակված ԵՊՀ ռեկտորի 2026 թ. ապրիլի 2-ի «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման մրցութային ընտրություն նշանակելու և անցկացնելու մասին» հրամանի համաձայն՝ ֆակուլտետում գործող 4 ամբիոնների գծով ըստ պաշտոնների (պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի) հայտարարվել է մեկական մրցութային տեղ՝ բացառությամբ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտի պաշտոնի՝ հայտարարվել է մրցութային 3 տեղ: Նշեց, որ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով անցկացվող բաց մրցութային ընտրությանը, այդ թվում՝ հավակնորդների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը կազմակերպվել է ԵՊՀ գիտական խորհրդի 2025 թ. ապրիլի 14-ի նիստի թիվ 8/4 որոշմամբ ընդունված ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների համալրման նոր կարգի համաձայն: Հավելեց, որ սույն կարգով մրցույթին մասնակցության պահանջները խստացվել են և այսօր քվեարկվում են՝ 1 պրոֆեսոր, 3 դոցենտ և 2 ասիստենտ: Հավակնորդների գործերը ներկայացնելու համար ձայնը փոխանցեց մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանին:

1.1 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի համալրման բաց մրցութային ընտրության մասին հարցը:

1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի տ.գ.դ., պրոֆեսոր Ֆիրուզա Մայիլյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթներ:

2. Տ.գ.դ., պրոֆեսոր Գ. Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը, տ.գ.թ. Ա. Սարգսյանը և տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյանը իրենց ելույթներում նշեցին, որ տ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Մայիլյանին ճանաչում են երկար տարիներ, մատնանշեցին նրա մասնագիտական և մանկավարժական բարձր որակները, անձնային դրական հատկանիշները: Հավելեցին, որ արժանի է պրոֆեսորի պաշտոնի տեղակալմանը և կոչ արեցին գործընկերներին կողմ քվեարկել պրոֆեսոր Ֆ. Մայիլյանին:

3. Դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ իր առաջարկ-հրավերով պրոֆեսոր Ֆ. Մայիլյանը շուրջ 2 տարի դասավանդում է ֆակուլտետում և համատեղ աշխատանքի ընթացքում առանձնացել է առաքինի և պարկեշտ վարքագծով, մասնագիտական բարձր որակներով՝ պատասխանատվությամբ և համագործակցելու ունակությամբ: Իր գոհունակությունը հայտնեց այն փաստի առթիվ, որ պրոֆեսոր Ֆ. Մայիլյանը դասավանդել է և այս պահին էլ դասավանդում է տարբեր բուհերում, բայց որպես հիմնական աշխատանքի վայր ընտրել է Երևանի պետական համալսարանը: Ելույթներն ամփոփելով՝ դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը կոչ արեց՝ կողմ քվեարկել պրոֆեսոր Ֆ. Մայիլյանին:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորի պաշտոնի համար տ.գ.դ., պրոֆեսոր Ֆիրուզա Մայիլյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա

արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Խառատյան (նախագահ), տեխ.գ.թ., դոցենտ Հարություն Զաքոյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈւԽ նախագահ Բենիկ Բալայան:

1.1 ԼՍԵՑԻՆ.

Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 25-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ֆիրուզա Մայիլյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 25 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ֆիրուզա Նորայրի Մայիլյանին ընտրել ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորի պաշտոնում և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին հաստատելու ՏԿՖ գիտխորհրդի սույն որոշումը:

1.2 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտի պաշտոնի համալրման բաց մրցութային ընտրության մասին հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել են նույն ամբիոնի դոցենտներ՝ տ.գ.թ. Վարդան Ալեքսանյանը և տ.գ.թ. Նոննա Խաչատրյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուների անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդների թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթներ:

2. Դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանը ֆակուլտետում աշխատում է շուրջ 14 տարի՝ 2012 թվականից և

իր ակտիվ ու բանիմաց աշխատանքային գործունեության շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների սերն ու հարգանքը:

3. Տ.գ.թ., դոցենտ Ա. Գալստյանը մատնանշեց տ.գ.թ., դոցենտ Ն. Խաչատրյանի մարդկային բարձր որակները՝ որպես ընկեր և մասնագիտական բարձր պատրաստվածությունը՝ որպես գործընկեր, մաղթելով մեծ հաջողություններ:

4. Դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ տ.գ.թ., դոցենտ Վ. Ալեքսանյանը երկար ժամանակ է աշխատել ֆակուլտետում՝ սկզբում համատեղությամբ, վերջին 3 տարիներին՝ որպես հիմնական աշխատակից, զբաղեցնում է ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալի պաշտոնը և աշխատում է մեծ նվիրվածությամբ:

5. Ելույթներն ամփոփելով՝ դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ երկու հավակնորդներն էլ արժանի են դոցենտի պաշտոնի տեղակալմանը և կոչ արեց գործընկերներին կողմ քվեարկել դոցենտներ՝ տ.գ.թ. Ն. Խաչատրյանին և տ.գ.թ. Վ. Ալեքսանյանին:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտի պաշտոնի համար դոցենտներ՝ տ.գ.թ. Վարդան Ալեքսանյանի և տ.գ.թ. Նոննա Խաչատրյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Խառատյան (նախագահ), տեխ.գ.թ., դոցենտ Հարություն Զաքոյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Բենիկ Բալայան:

1.2 ԼՍԵՑԻՆ.

Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 25-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝

1) տ.գ.թ., դոցենտ Նոննա Խաչատրյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 24 անդամ, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:
2) տ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 23 անդամ, դեմ՝ 2, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝

1) տ.գ.թ., դոցենտ Նոննա Նիկոլայի Խաչատրյանին ընտրել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտի պաշտոնում:
2) տ.գ.թ., դոցենտ Վարդան Սամվելի Ալեքսանյանին ընտրել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

1.3 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնի համալրման բաց մրցութային ընտրության մասին հարցը:

1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի տ.գ.թ., դոցենտ Նարինե Քոչինյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթներ:

2. Տ.գ.թ., դոցենտ, Ա. Խառատյանը, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը իրենց ելույթներում մատնանշեցին տ.գ.թ., դոցենտ Ն. Քոչինյանի մասնագիտական կայացման ընթացքը և գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նշեցին, որ տ.գ.թ., դոցենտ Ն. Քոչինյանը վայելում է գործընկերների և ուսանողների սերն ու հարգանքը:

3. Դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ տ.գ.թ., դոցենտ Ն. Քոչինյանը ֆակուլտետի հնաբնակներից է՝ դասավանդում է 2002 թվականից: Ելույթներն ամփոփելով՝ դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը կոչ արեց՝ կողմ քվեարկել դոցենտ Ն. Քոչինյանին:

1.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնի համար տ.գ.թ., դոցենտ Նարինե Քոչինյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց

քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Խառատյան (նախագահ), տեխ.գ.թ., դոցենտ Հարություն Զաքոյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Բենիկ Բալայան:

1.3 ԼՍԵՑԻՆ.

Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 25-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., դոցենտ Նարինե Քոչինյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 11 անդամ, դեմ՝ 12, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 2:

1.3 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ տ.գ.թ., դոցենտ Նարինե Սինարայի Քոչինյանին չընտրել ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտի պաշտոնում:

1.4 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտի պաշտոնի համալրման բաց մրցութային ընտրության մասին հարցը:

1.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի տ.գ.թ., ասիստենտ Հասմիկ Դովլաթյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթներ:

2. Դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ տ.գ.թ, ասիստենտ Հ. Դովլաթյանը ֆակուլտետի շրջանավարտ է, ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական թեզ և սկսել է դասավանդել ֆակուլտետում, վայելում է ուսանողների անսահման սերն ու հարգանքը:

3. Տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը մատնանշեց, որ որպես ամբիոնի վարիչ բարձր է գնահատում տ.գ.թ, ասիստենտ Հ. Դովլաթյանի նվիրվածությունը դասավանդման գործընթացում, նրան բնութագրեց՝ որպես տիպիկ համալսարանական:

4. Դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը, ելույթներն ամփոփելով, կոչ արեց գործընկերներին կողմ քվեարկել ասիստենտ Հ. Դովլաթյանին:

1.4 ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտի պաշտոնի համար տ.գ.թ., ասիստենտ Հասմիկ Դովլաթյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Խառատյան (նախագահ), տեխ.գ.թ., դոցենտ Հարություն Զաքոյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Բենիկ Բալայան:

1.4 ԼՍԵՑԻՆ.

Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 25-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., ասիստենտ Հասմիկ Դովլաթյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 24 անդամ, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 0:

1.4 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ տ.գ.թ., ասիստենտ Հասմիկ Հովհաննեսի Դովլաթյանին ընտրել ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտի պաշտոնում:

1.5 ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտի պաշտոնի համալրման բաց մրցութային ընտրության մասին հարցը:

1.5 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը հայտնեց, որ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտի պաշտոնի տեղակալման մրցույթին մասնակցելու համար դիմել է նույն ամբիոնի տ.գ.թ., ասիստենտ Անի Խալաթյանը: Մրցութային հանձնաժողովի նախագահը ներկաներին ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, ներկայացրեց հավակնորդի թեկնածության

վերաբերյալ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունները:

Ելույթներ:

2. Դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ տ.գ.թ, ասիստենտ Ա. Խալաթյանը ևս ֆակուլտետի շրջանավարտ է, ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական թեզ և սկսել է դասավանդել ֆակուլտետում, վերջին տարիներին աշխատել է ՊԵԿ-ում, այս տարվա փետրվարից հիմնական աշխատանքի է անցել ֆակուլտետում, նաև դեկանի տեղակալի պաշտոն է զբաղեցնում: Մատնանշեց տ.գ.թ, ասիստենտ Ա. Խալաթյանի դերակատարությունը վերջին երկու տարիներին ֆակուլտետում կազմակերպվող ամենամյա միջազգային գիտաժողովի կազմակերպչական աշխատանքներում: Շեշտադրեց նրա համառ նվիրվածությամբ կատարված աշխատանքը և ահռելի ներդրումն այդ գործում՝ հրապարակային շնորհակալություն հայտնելով:

3. Տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը իր ելույթնում նշեց, որ տ.գ.թ, ասիստենտ Ա. Խալաթյանին դասավանդել է, նաև համատեղ դրամաշնորհային աշխատանքներ են կատարել և նա միշտ իրեն շատ լավ է դրսևորել:

4. Ելույթներն ամփոփելով՝ դեկան, դոցենտ Կ. Խաչատրյանը նշեց, որ տ.գ.թ, ասիստենտ Ա. Խալաթյանն արժանի է ասիստենտի պաշտոնի տեղակալմանը և կոչ արեց գործընկերներին կողմ քվեարկել:

1.5 ՈՐՈՇԵՑԻՆ.

ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտի պաշտոնի համար տ.գ.թ., ասիստենտ Անի Խալաթյանի ընտրության հարցը դնել փակ քվեարկության: Այս կապակցությամբ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու նպատակով գիտխորհրդի նախագահ տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանի առաջարկով ֆակուլտետի գիտխորհրդի որոշմամբ՝ դրա անդամներից բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ տ.գ.թ., դոցենտ Ալվարդ Խառատյան (նախագահ), տեխ.գ.թ., դոցենտ Հարություն Զաքոյան, ՏԿՖ «Կառավարում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող, ֆակուլտետի ՈՒԽ նախագահ Բենիկ Բալայան:

1.5 ԼՍԵՑԻՆ.

Հաշվիչ հանձնաժողովի նախագահի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին: Խորհրդի նիստին ներկա են եղել 32 անդամներից 25-ը, ովքեր բոլորն էլ մասնակցել են քվեարկությանը: Քվեարկության արդյունքները հետևյալն են՝ տ.գ.թ., ասիստենտ Անի Խալաթյանի օգտին քվեարկել է գիտխորհրդի 23 անդամ, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկների թիվը՝ 1:

1.5 ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտխորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները՝ տ.գ.թ., ասիստենտ Անի Սարգսի Խալաթյանին ընտրել ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտի պաշտոնում:

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ